



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2024 թվականի N 238-Ա

**«ԲԱԼԱՔԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ  
ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉՈՒՎԻ ՄԱՐԻԱՆՆԱ  
ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Բալաքի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գ. Պողոսյանի դիմումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. «Բալաքի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գայանե Պողոսյանին 2024 թվականի հունիսի 27-ից հուլիսի 4-ը ներառյալ տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մի մասը՝ 6 աշխատանքային օր:
2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Բալաքի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսուցչուհի Մարիաննա Խեչումյանին:

2024-06-28 16:53:09 GMT+4  
Հավաստված է ՎԵՆԻՔԻ խոսքով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2024թ. հունիսի 28  
ք. Կապան